Ճեմարանի վերատեսուչ Մ. ՄԻՆԱՍՅԱՆ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԸ

Հոգևոր ճեմարանը բոլորեց իր գոյության առաջին տարին։ 1945 թվի նոյեմբերի 1-ին Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանի բացումով հիմք դրվեց եկեղեցական մի կարևոր հիմնարկի, որը կոչված է Հայ Եկեղեցու համար լավագույն կադրեր պատրաստելու։ Այստեղ են ուսանում ու դաստիարակվում ապագա մեր հայ եկեղեցական գործիչները։

Հոգևոր ճեմարանի դասընթացն ունի վեց տարվա տևողություն, որից երեքը՝ դասարանական և երեքը՝ լսարանական բաժիններում։

1945-46 ուս. տարում նորաբաց ճեմարանն ուներ մի առաջին դասարան 35 սանով։

Հոգևոր ճեմարանը որպես գիշերօթիկ դպրոց բոլոր սաներին ապահովել է թե սննդով, թե զգեստով և թե գիշերօթիկ դպրոցին հատուկ բոլոր հարմարություններով։

Նորաբաց Հոգևոր ճեմարանը պարզ է, որ առաջի տարում պետք է որոշ դժվարություններ առաջ կանգնած լիներ. շենքի վերանորոգությունը և դասարանական, դրենական, դասական պիտույքների, ննջարանային պարագաների, հանդերձեղենի, կոշկեղենի, վառելանյութի, սննդի հայթայթումը կապված էին դժվարությունների հետ։ Մյուս կողմից անհրաժեշտ էր ճեմարանն ապահովել նաև



Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանի շենքը

որակյալ դասախոսական կադրերով և ուսումնական ծրագրերով։

Պիտի ասել, որ այդ դժվարությունները հաղթահարվել են շնորհիվ Վեհափառ Հայրապետի անդուլ աշխատանքի ու եռանդուն ջանքերի։ Չնայած Վեհափառ Հայրապետի բազմազբաղ, առօրյա բազմաթիվ հոգսերով ծանրաբեռնված լինելուն, այնուամենայնիվ Նա երբևիցե չի դադարել ճեմարանի խնդիրներով զբաղվել։ Վեհափառը ճեմարանի համար անձամբ կազմել է ուսումնական ծրագրեր, ամենօրյա ցուցմունքներ է տվել, ճեմարանն ապահովել է որակյալ դասախոսական կադրերով։ Որպես հոգատար հայր, Վեհափառը միշտ հետաքրքրվել ու հետևել է սաների թե ուսումնա-դաստիարակչական և թե սննդի ու կենցաղի խնդիրներով։ Մերոնադարդ Հայրապետը իր մշտական խորհրդներով ու ցուցմունքներով օգնել է ճեմարանի վարչությանը, պարբերաբար ունկնդրել է պարապմունքներին և անհրաժեշտ ցուցմունքներ տրել, բարելավել է սաների վիճակը։

Վեհափառի ջանքերը պսակվել են հաջողությամբ. ամբողջ ուսումնական տարվա ընթացքում ճեմարանն ապահովված է եղել դասախոսական կադրերով, վառելանյութով, դպրոցական ու ննջարանային պիտույքներով. սաներն ապահովված են եղել հագուստով, ոտնամանով, սննդով։ Պիտի ասել, որ Վեհափառը նյութական ոչ մի միջոց չի խնայել ճեմարանի նորմալ աշխատանքների համար։

Նորաբաց ճեմարանի գոյության առաջին տարում ավանդվել են հետևյալ առարկաները ստորև նշվող դասախոսների կողմից.

Հայոց լեզու— գրաբար ու աշխարհաբար— Ա. Առաքելյան։

Ռուսաց լեզու— Եղիշե վարդապետ Հարությունյան։

Անգլերեն— Մ. Մինասյան։

Հայոց պատմություն— Ռուբեն եպիսկ. Դրամբյան։

Հայ եկեղեցական պատմություն— Ռուբեն եպիսկ. Դրամբյան։

Հայաստանի աշխարհագրություն— Ա. Գևորգյան։

ՍՍՌՄ-ի Կոնստիտուցիա— Ա. Դիլոյան։

Կրոն— Ներսես եպիսկ. Աբրահամյան և Կարապետ վարդապետ Ասլամազյան։

Մաթեմատիկա— Կարապետ վարդապետ Ասլամազյան։

Երգեցողություն— Տեր Նիկոլ քահանա Բաբիյան։

Ֆիզկուլտուրա— Բ. Ասատրյան։

Ճեմարանն ունի նաև իր բժիշկը (Կ. Բեգ-

Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանի մի խումբ սաներ. կենտրոնում ճեմարանի վերատեսուչ Մ. Մինասյանը

լարյան), որը բացի ամենօրյա բուժօգնությունից ամսական չորս անգամ հանրամատչելի դասախոսություններ է կարդացել առողջապահական խնդիրների շուրջը։

Դասախոսներից դոցենտ Առաքել Առաքելյանը և ճեմարանի վերատեսուչ Մինաս Մինասյանը Պետհամալսարանի և Մանկավարժական ինստիտուտի դասախոսներից են. Եղիշե վարդապետ Հարությունյանը նույնպես դոցենտ է և նախկինում Բժշկական ինստիտուտի դասախոս է եղել. մյուս դասախոսների ճնշող մասը նախկին Գևորգյան ճեմարանավարտներ են։

Վեհափառ Հայրապետն ավելի լավ համոզվելու համար, որ իր տրամադրած միջոցներն ու գործադրած ջանքերն իզուր չեն անցել, Հոգևոր Գերագույն Խորհրդի անդամների՝ Ս. Մալխասյանի, Ե. Շահազիզի ու մյուսների հետ միասին ներկա եղավ տարեվերջի քննություններին ու ըստ արժանվույն թե քննադատեց, և թե իր խորիմաստ խորհուրդներով քաջալերեց ու խրախուսեց սաներին ու դասախոսներին։

Գալիք ուսումնական տարում սաների թիվը կրկնապատկվելու է. դրա հետ մեծանալու են նաև ճեմարանի կարիքները։ Երևանից նոր դասախոսներ հրավիրելու համար կարիք կզգացվի նոր ավտոմեքենայի՝ դասախոսներին Երևանից Էջմիածին ու ետ տեղափոխելու համար. կարիք կզգացվեն դասարանական, գրենական, դասական, ննջարանային լրացուցիչ պիտույքների։

Նախատեսվում է ճեմարանին կից կազմակերպել նաև գրադարան-ընթերցարան, ֆիզկուլտ-դահլիճ, բաղնիք, լվացքատուն, ձեռք բերել խոհանոցի համար լրացուցիչ սարքավորում և կազմակերպվելիք լարային խմբի համար երաժշտական գործիքներ։

Այս բոլորը կապված է նյութական միջոցների հայթայթման հետ։

Ցանկալի է, որ մեր եկեղեցասեր ազգայինները հետևելով կաթողիկոսական ընտրության պատգամավորների օրինակին ճեմարանի նկատմամբ որոշ պարտավորություններ ստանձնեին. դրանով նրանք մեծապես օժանդակած կլինեին ճեմարանի նորմալ աշխատանքներին։

Անկասկած է, որ ճեմարանը, որպես նորաբաց հաստատություն, ունեցել է որոշ բացեր։ Ներկայումս եռանդուն աշխատանքներ են տարվում գալիք ուսումնական տարին պատրաստ դիմավորելու համար։